

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 բուրձի կես տարվանը 6 բուրձի
Առանձին համարները 5 կոպեկով
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ
Մեր հասցեն. Тифлисе, редакция «Мелі».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլեֆոն № 253.

Ճարտարութիւնը բաց է ուսուստեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)
Ճարտարութիւնը ընդունում է ամեն լեզուով
Ճարտարութիւններէ համար վճարում են
խաւարանիւր տողատիւր 10 կոպեկ
Տէլեֆոն № 253.

ՀԱՄԱՐԱՆՈՒՄ ԳՐԻՔՈՐ ԱՐՄԵՐՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Հերթական խնդիրներ.—Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Կողմանեան երկրի բնակիչներին: Մա-
մուլ. Մատենագրութիւն. Ներքին խնդիր.
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թրանսխայից.
—ՀԱՅԿԱՆԵՐ.—ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Տեղական խնդիրներ:

ՀԱՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Մեր երկրի ազգաբնակչութեան ուշա-
գրութիւնը առաջիկայ շաբաթներում պէտք
է զբաղված լինի տեղական խնդիրներով:

Ժող. փեր պէտք է տեղի ունենան իր-
դերում, գաւառական կենտրոններում և
նահանգական քաղաքներում ընտրելու
ներկայացուցիչներ այն խորհրդակցու-
թիւններին համար, որոնք պէտք է քննեն
տեղական խնդիրները և կամ դեմ-
ստովօրի հիմնարկութիւններին ներմուծման
վերաբերեալ հարցերը:

Մենք կը տանք «Մշակի» մէջ յօդուած-
ներ և ընթացիկ տեղեկութիւններ զեմ-
ստովօր վերաբերեալ գործերի մասին և
կաշխատեմք բաւականաչափ նիւթ տալ,
որպէս զի մեր գաւառական հասարակու-
թիւնը հնարաւորութիւն ունենայ գիտակե-
ցաբար վերաբերվել նրա առաջ զբաղ-
վարներին և կարող լինի առեղ
փոքր ի շատ է լուրջ և կշռադատված
կա՞ծիք:

Փոխարքայի դիւանատունը մտադիր է
հրատարակել զեմստովօր 1864 թուականի
կանոնադրութիւնը, որ լաւագոյն է և
զածնեւորէ իր մէջ պարունակող սկզբունք-
ներով: Այն թուականից, երբ նրա հրատա-
րակվելուց անցել է քառասուն տարի և
անշուշտ այդ երկար ժամանակվայ ըն-
թացքում թէ ազգաբնակչութեան կարիք-

ները աւելի բարդացել են և թէ եղած
փորձը ցոյց է տուել մի քանի թերու-
թիւններ եղած կանոնադրութիւնների
մէջ, ուստի մեր գաւառական խորհրդակ-
ցութիւնները պէտք է կարող լինեն ի-
րանց կողմէն ցուցումներ անել այն բա-
րեփոխութիւններին մասին, որ նրանք
անհրաժեշտ են համարում մտցնելու կա-
նոնադրութեան մէջ:

Մենք հրաւիրում ենք մեր գործողնե-
րին, որոնք ցրված են երկրի զանազան
մասերում յայտնել խորհրդածութիւններ
ընկնող հարցերի մասին, ոչքի առաջ ու-
նենալով մեր իրականութեան պահանջ-
ները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Մի քանի ժամանակից ի վեր, մասնաւոր
ներկայ տարվայ փետրվարի 5—10 Բագուի
տեղաբնակները օրերից յետոյ, Կովկասի եր-
կու ազգութիւնների՝ հայերի և մուսուլման-
ների մէջ եղած փոխադարձ յարաբերութիւն-
ները ստացան չափազանց թշնամական բնա-
ւորութիւն և Բագուի տեղաբնակ յետոյ առաջ ե-
կան արհեստ ընդհարումներ յիշեալ երկու
ազգութիւնների մէջ՝ նախ Նախիջևանում և
Նախիջևանի գաւառում և ապա Երևանում և
Երևանի նահանգի զանազան տեղերում: Ան-
կարգութիւնների տևողութիւնը՝ չորսիւս այն
հանգամանքի, որ զրանք ծագում էին ցերե-
ցան տեղերում և հետո զօրքի բնակավայրե-
րից և զօրքի տեղական իշխանութիւնների մի
քանի ղեկավարների կարգադրութեան քաջակա-
յութիւնից, ետիք առեղ մի կողմից անբա-
րեքիտ անձանց ժողովուրդի մէջ լուր տարածե-
լու իբր թէ այդ անկարգութիւնները քաջակե-
րութիւն են ստանում կառավարութիւնից և
միւս կողմից—հաւատալու այդ լուրերին: Ա-

նուշադիր թողնելով այդ չարամիտ հնարովի
լուրը, որ հակասում է առողջ զատողութեան,
ես պարտք եմ համարում գտնել Բագուի
կառավարի իմ կառավարութեան յանձնված երկ-
րի ընակիչներին՝ առանց խորութեան կրօնի
և ազգութեան, հրաւիրելով նրանց մոռանալ
կորսուածքը տահալին թշնամութիւնը, որ
առնում է դէպի փոխադարձ կոտորած և ու-
նեւում, և միմեկի միահամուռ աշխատանքի ի
բարբորութիւն Կովկասի, ի բարբորութիւն կա-
նոնի և երկխայց, յիշելով որ միայն ընդհա-
նոր խաղաղ աշխատանքը ազգութիւնների
որոնք պատմական ճակատագրով անբախելի
կերպով կապված են իրար Ռուսաց Պետու-
թեան Գալիսիայի տակ, կարող է օգնել ծաղ-
կեցնել թէ՛ ամբողջ տէրութիւնը և թէ՛ Նու-
շա՛կ հայսերական Սեփոքեան իւրաքանչիւր
հաւատարիմ հպատակին տուննապէս:

Ձեռնարկելով բացառիկ միջոցներ ի պաշա-
պանութիւն այն տեղերի, ուր վերջին ժամա-
նակ կատարվեցան տեղաբնակ ընդհարումներ
և ուր յաճախ կրկնվեցան ըստմեծի յան-
ցանքներ, ես ցանկանում եմ հաւատալ որ
դէպի ընակիչներ ուղղված իմ անկեղծ համոզ-
մունքը խօսքը աւելի շուտ առաջ կը բերէ
խաղաղութիւն և կրքերի հանդարտութիւն,
քան զինուորական դրութեան այն խիստ կա-
նոնները, որոնց վերացնելու համար կը միջ-
նորդեմ Քաղաքային Կայսեր առաջ անշաղկապ
դէպքում, հէնց որ այդ կարելի կը լինի:

Հրաւիրելով դէպի կրքերի հանդարտութիւն
և խաղաղ աշխատանք, մեծաշուք եմ որ ընա-
կիչներէ մէջ յարգ ու պատիւ վայելող ազգե-
ցիկ անձինք, մասնաւոր ըստ կրօնների տե-
ղական հոգևորականութիւնը, չեն խնայել ի-
րանց բեղմնաւոր օգնութիւնը այս դէպքում:
Հերթ է թշնամութիւն, փոխադարձ սպա-
նութիւններ, աւերածներ և զաղտնի անխա-
նութիւն. հերթ է սրանցից առաջացած խու-
վութիւնները, հերթ է զուր թափած արիւն և
արտասուք:

Նսրին Կայսերական Սեփոքեան Կովկասի
Փոխարքայ, գնեհալ-աղիւստան կոմս Վ. օրօն-
ցով-Դաւիթով

ՄԱՍՈՒՆ

Մայրաքաղաքի թերթերում (տես «Новости»
№ 173) տպված է Թիֆլիսից ուղարկված Պե-
տերբուրգի հեռագրական գործակալութեան
հետեւեալ հեռագիրը, յուլիսի 8-ին.

«Գովկասի ուսումնարանական շրջանի հո-
գաբարձուի ծրագրով, որի մասին ինքն հո-
գաբարձուն բանաւոր կերպով հաղորդել է
գործակալութեան թղթակցին, կովկասեան
տարբական դպրոցներին մէջ ուսումը պէտք է
աւանդվի տեղական լեզուով, նայելով թէ որոշ
տեղում ինչ ազգութիւն է ապրում: Այս ի-
րան ազգաբնակչութեան իրաւունքը պէտք է արվի
որոշել, աշակերտներին համար որ հասակից
լաւագոյն կը լինի սկսել ուսուց լեզուի ու-
սումը, որը նոյնպէս պէտք է աւանդվի տե-
ղական լեզուով: Մի խօսքով այդ ծրագրով
ուսուց լեզուն չը պէտք է տիրապետէ կով-
կասեան դպրոցներում և տեղական ազգու-
թիւններին իրաւունք կը արվի իրար վճռել,
պէտք է այդ լեզուի ուսումը և որ հասակից»:

Այս խմբագրութեամբ ուղարկված հեռագրի
ընդ, աւարակայ չը կայ, առիթ առեց որոշ
ուղղութեան լրագրիցներէ, օրինակ «НОВОЕ
Время» լրագրին, անմիջապէս աղաղակել, հա-
րայ-հուրայ բարձրացնել, թէ ուսուց լեզուն
Կովկասից արտաբանվում վտանգին է ենթարկ-
ված, թէ ուսուսական շահերը վտանգված են և
այն: Թող միամտվեն ուսու շօխիստները և
նապիւնախտները որ ոչ ոք Կովկասում չէ մտա-
ծում արհամարհել ուսու լեզուն կամ նրան երկ-
րորդական նշանակութիւն տալ: Կովկասի ամ-
բողջ ազգաբնակչութեան ամենապահանջ շահե-
րը այն է որ քաղաքացիական, անտեսական,
իրաւագիտական, առևտրական շահերը պա-
հանջում են, որ պետական լեզուն մասնաւոր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

I

Մեր Անդրկովկասի ազգաբնակչութիւնը պատ-
րաստվում է հաստատել մեր երկրում Տե-
ղական ինքնավարութիւն կամ զեմստով-
օր: Եւ այդ ինքնավարութիւնը և ինչ գործ
ունի նա կատարելու:

Տեղական ինքնավարութիւնը յանձնում է
տեղական ազգաբնակչութեանը գաւառի կա-
րիքներին վերաբերեալ այն բոլոր գործերը,
որոնք մինչև այժմ գտնվում էին ոստիկանա-
կան վարչութեան ձեռքը: Այսուհետև տեղա-
կան ազգաբնակչութիւնը պէտք է ինքը աւեր
գաւառի գաւառի անտեսական բոլոր գործերի
վրա և հոգատար լինի նրա առաջադիմու-
թեան և բարգաւաճման վրա:

Ինչպէս քաղաքներում ոստիկանական վար-
չութեան տեղ հաստատվեց քաղաքային ինք-
նավարութիւն, այնպէս էլ ամբողջ գաւառի
և նահանգի վերաբերութեամբ այժմ ծրա-
գրվում են տեղական ինքնավարութիւններ:

Սակայն ինչպէս պէտք է գաւառի և նա-
հանգի սպիւնակութիւնը կառավարէ տեղա-
կան գործերը:

Իր ընտրելիքներին միջոցով:

Գաւառի սահմաններում գտնվող, թէ կա-
ռու ծառէրեր, թէ գիւղ-ցիւղեր և թէ քաղա-
քացիներ յատուկ ժողովներ են կազմում և
ընտրում ձայնաւորներ որոշ թիւ, որոնք և
կազմում են գաւառական զեմստովօրի մարմինը:

Գաւառական զեմստովօրի ձայնաւորները ի-
րանց կողմից ընտրում են լիազօրներ որոշ
թիւ, որոնք հաւաքվելով նահա՛գական քա-
ղաքում կազմում են նահանգական զեմստովօրի
մարմինը:

Գաւառական զեմստովօրի ձայնաւորները տար-
վայ որոշ ժամանակում հաւաքվում են գա-

ւառական կենտրոնում և ընտրութեան ենթա-
կում գաւառական զեմստովօր վերաբերեալ հիմ-
նական խնդիրները, կազմում նախահաշիւ,
ընտրում մշտական գործող վարչութիւն և ա-
պա քաղվում հեռանում իրանց աները:

Նոյնն էլ անում են նահանգական զեմստովօրի
ձայնաւորները:

Գաւառական զեմստովօրի ժողովը շարունակ-
վում է 10 օր, իսկ նահանգականը 20 օր:

Թէ գաւառական և թէ նահանգական զեմստ-
ովօնների գործերը վարելու և կայացրած որո-
շումների կատար անելու համար, կազմվում
են գաւառական և նահանգական կենտրոննե-
րի վարչութիւններ կամ ուղարկվում, որոնք
մշտապէս պաշտօնավարութեամբ առաջ են
տանում զեմստովօրի գործերը:

Այդ ուղարկվածները նման են քաղաքային
ու պաշտօններին տարբերութեամբ, որ քա-
ղաքներում ձայնաւորները տարվայ ամբողջ
ընթացքում գործում և ղեկավարում են գոր-
ծերը, իսկ զեմստովօր մէջ ձայնաւորները Ժո-
ղովները գտնաբերվում են միայն մի որոշ ժա-
մանակ և ապա գործավարութիւնը մնում է
ուղարկվալի վրա:

Մեր ընթերցողներին գաղափար տալու հա-
մար թէ ինչ գործեր ունի կատարելու զեմստ-
ովօն, առաջ ենք բերում 1864 թուի կանոնա-
դրութեան առաջին գլխից մի կտոր, որտեղ
մի առ մի հաշված են զեմստովօր գործունեու-
թեան ենթակայ առարկաները:

Ահա այդ կտորը:

ԱՌԱՋ ԳԼՈՒԽ

Ընդհանուր կանոնադրութիւն

1) Իւրաքանչիւր նահանգի և իւրաքանչիւր
գաւառի տեղական անտեսական շահերին և
կարիքներին վերաբերեալ գործերը կառավա-
րելու համար հաստատվում են նահանգական
և գաւառական զեմստովային հիմնարկութիւն-
ներ, որոնց կազմը և գործունեութեան կարգը
որոշվում են ներկայ կանոնադրութեամբ:

2) Ձեմստովային հիմնարկութիւնները իրա-

ւառութեան ենթակայ գործերը նահանգում և
գաւառում հետեւեալներն են.

I) Ձեմստովօր գործերը, դրամագրութիւնների
և դրամական տուրքերի վերահստութիւնը:

II) Ձեմստովային պատկանող շինութիւնների,
ուրիշ կառուցութիւնների և զեմստովօր հաշվով
պահվող հաղորդակցութեան ձանապարհների
շինութիւնը և պահպանութիւնը:

III) Ժողովրդական մատակարարութեան ա-
պահովելու միջոցները:

IV) Ձեմստովային բարեգործական հաստա-
տութիւնների կառավարութիւնը և խնամա-
տարութեան միւս միջոցները. մուրացկանու-
թեան դաշարեցման միջոցները. եկեղեցիների
կառուցման մասին հոգատարութիւնը:

V) Գործերի փոխադարձ զեմստովային ա-
պահովութեան գործերի կառավարութիւնը:

VI) Տեղական առևտրի և արդիւնագործու-
թեան զարգացման մասին հոգատարութիւնը:

VII) Ժողովրդական կրթութեան, ժողովրդա-
կան առողջութեան և բանտերի հոգատարու-
թեան մէջ մասնակցութիւն ըստ մեծի մասին
անտեսական կողմից և օրէնքով որոշված
սահմաններում:

VIII) Աշակերտութիւն առաջն առնելու անա-
սուններ կոտորածներին նոյնպէս պահպանե-
լու հացի ցանքները և ուրիշ բոյսեր մոբիլի-
տանէները և ուրիշ ֆեաւակար միջոցների և
կենդանիների աւերումները:

XI) Ձինւորական և քաղաքացիական վար-
չութիւնների կողմից զեմստովօր վրա դրած
պահանջները կատարումը և պատասխան պար-
տաւորութիւններին վերաբերեալ գործերի մէջ
մասնակցութիւն:

X) Դատաւորման պետական դրամական
այն տուրքերի, որոնց կարգաւորումը նահան-
գի և գաւառների մէջ վերապահված է զեմ-
ստովային հիմնարկութիւններին այդ մասին
հրատարակված և հաստատված օրէնքների
կամ յատուկ կարգադրութիւններին հիման վրա:

XI) Նահանգի կամ գաւառի զեմստովային
պահանջներին բաւարարութիւն տալու համար

Ա. Բալանթար

լինի և տարածվի երկրի մէջ. բացի դրանից մենք գտնվում շարունակ ուսական կուլտուրայի ազդեցութեան տակ, անհրաժեշտ է մեղ լաւ ծանօթ լինել ուսական լեզուին, որպէս զի կարողանանք օգտվել այդ կուլտուրայից և մասնաւոր ուսաց դրականութիւնից: Մենք մինչև այսօր պահանջի ենք միայն և պահանջում ենք, որ մայրենի լեզուին ևս տեղ տրվի մեր դպրոցներում, որ մեր երեխաները ստանան ուսումնի համաձայն ժամանակակից մանկավարժութեան առողջ պահանջներին, որ տալ ուսումնի երեխային իր սեպական, մայրենի լեզուով: Ինչպէս ուսան հարկաւոր է սովորել իր լեզուն, իր գրականութիւնը, նոյնպէս և վրացուհի, հայերի, թուրքերի հարկաւոր է սովորել իր լեզուն, բայց մայրենի լեզուի հետ միասին մեղ, իբրև Ռուսաստանի քաղաքացիներ, իբրև մի ընդհանուր հայրենիքի գաւազաններ, անհրաժեշտ է սովորել և պետական լեզուն, որին պէտք ունինք մեր կեանքի մէջ ամեն մի քայլափոխում:

Հեռագիրները յայտնում են, որ Բազելում գումարված սիւնիստները եօթներորդ կոնգրէսը ըննելով այն ծրագիրը, որ մշակված էր մի խմբի կողմից—գաղթեցնել հրէական ժողովուրդը Աֆրիկա և այլուհը հաստատել հրէական պետութիւն, որի համար Անգլիան տալիս էր և մի որոշ երկիր—Ուգանդան, բուն և աղմկալի վիճաբանութիւններից յետոյ մերժեց այդ ծրագիրը, յայտնելով, որ սիւնիստական զգաւակերպութիւնը հաստատ է իր հիմնական սկզբունքներ—ստեղծել հասարակական իրաւական հայրենիք Պաղեստինում իր նախկին հայրենիքում: Եթէ ընդունելու լինենք, որ հայրենի հողը կազմում է ամեն մի ազգութեան էական տարրերից մինը և պատմական անցեալը ահագին վճարական նշանակութիւն ունի ամեն մի ազգի գոյութեան համար, պէտք է ամենքս որ սիւնիստները կոնգրէսը լռելի կերպ էլ վարվել չէր կարող: Թողնել սեփական հայրենիքը և գաղթել այլ երկիր, որի հետ գաղթող ժողովուրդը ոչ մի բանով չէ կապված—դա կը նշանակէ այդ ազգի համար մահուան դատաւճիռ աշխարհային:

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Delitsch: Das einstige Paradies. Berlin 1904
Ի և ի չ-երեմիայի դրախտը: Բեռլին 1904

Վերջին տասն տարվայ ընթացքում արևմտեան եւրոպական ազգերից գերմանացիներն են ամենից շատ զբաղվել Առաջադրութեան երկրներին ուսումնասիրութեամբ: Թէ հնագիտական, թէ պատմական, թէ աստիճանական և թէ աշխարհագրական տեսակետից: Այդ բանին մեծ չափով նպաստել է հենց ինքը գերմանական կառավարութիւնը, որ վերջին տարիներին մի քանի հեռագիր է քաղաքական և աստիճանական մեծ շահերով: Այդ շահերը ներկայումս պաշտօնական Գերմանիայի տրտաբեր քաղաքականութեան համար գերակշռող դեր են կատարում, որոնց ամենազգլխաւոր նպատակն է Գերմանիայի արագ աճող ազգաբնակչութեան համար նոր գաղթավայրեր, իսկ նոր սաստիկ զարգացող արդեւտարները, որոնք համար նպատակաւոր պայմաններով սպասող նոր շուկա ձեռք բերելու: Եւ Գերմանիայի արտաբեր քաղաքականութեան հեռանկարը ներկայումս միեւնոյն Արեւելքի ընդհանրապէս և մասնաւորապէս Փոքր-Ասիայի մի քանի մասերի վերաբերմամբ նպատակաւոր է: Եթէ մասնաւորապէս նկատել ունենանք Գերմանիայի քաղաքական ժամանակակից ազդեցութիւնը և արած մի քանի նուաճումները Փոքր-Ասիայում: Գերմանիայի կատարած նուաճումներից մէկն էլ Բաղդադի ապագայ երկաթուղին է, որ պէտք է անցնի հնագիտական երեմիայի քաղաքակրթված, իսկ ներկայումս գրեթէ մեծ մասամբ նոյն իսկ անմարդաբնակ մի քանի երկրներով, որոնցից ամենազգլխաւորը Հին Բաբելոնն է, որի վերաբերմամբ Գերմանիան քաղաքական և աստիճանական խոշոր ակնկալութիւններ ունի: Ի՞նչ էր ներկայացնում Բաբելոնը կամ Բաբելոնստանը գին ժամանակ, և ի՞նչպէս դրութեան մէջ է գտնվում նա ներկայումս: Ահա վրաստատապէս այդ հարցումը և ըզբաղվում գերմանացի նշանաւոր ուսուցչապետ Դիլիշը, վերագրելով կողմ աշխատութեամբ, որ մի ուրիշ հնդկականութիւնը «Babelu-nd-nd Bibel» (Բաբելոն և Աստուածաշունչ) վերնագրով ժամանակին մեծ աղմուկ հանցի արեւմտեան Եւրոպայի թէ գիտական աշխարհում և թէ մամուլի մէջ: Ուսուցչապետ Դիլիշը երեք անգամ գիտական նպատակով ճանապարհորդել է Բաբելոնում իբրև այն էկզպեդից-

իայի ղեկավար, որ գերմանական կառավարութեան և մի քանի գիտական ընկերութիւնների նպատակներով ուղարկվել էր այնտեղ ուսումնասիրութիւններ կատարելու: Հեղինակը արժանաւոր և պայծառ գոյնեղով է նկարագրում հին Բաբելոնը, որ մի իսկական երեմ գրախոս էր և հաջահատիկներ ու արժանեղան անտառներով հարուստ երկիր: Ներկայ ջրաղուրդ Բաբելոնը հին ժամանակ հարկաւոր բարդ ջրանցքներով էր զարդարված: Այդ տեսակետից Բաբելոնը հին դարու հոլանդական էր: Զբոսնցները իրանց ծագմամբ զգաւակերպէս պարտական էին Բաբելոնստանի շինարար թողած պատմական յիշատակաբաններում նոյն իսկ պարծանքով են խոսում: Հենց Գերմանիան էլ իր ամբողջ յոյսը այն հանգամանքի վրա է դրել, որ ապագայումս էլ Բաբելոնը մի շարք արհեստական միջոցներով կարելի է այնպէս ջրառատ երկիր դարձնել և նպաստել երկրի աստիճանական զարգացման: Պատմութիւնը վկայում է, որ Բաբելոնի գրեթէ իւրաքանչիւր իշխան աշխատում էր իր անունը ապագայ սերունդի աչքում անմահացնել որ և է խոշոր ջրանցքի շինութեամբ կամ վերանորոգութեամբ: Հենց այդ ջրանցքների մօտ էին հիմնված Բաբելոնի բազմամարդ ու ծաղկած քաղաքները, և այդտեղ էր գլխաւորապէս կենտրոն եղել: Բաբելոնի երեքնիք բազմադար հարստութիւնը առած էր դարձել, իսկ այժմ նրա կատարեալ հակադասութիւն է: Ամբողջ Արեւելքի երեքնիք ամենապողտակ երկիրը ներկայումս մի կատարեալ աւաղտոն անապատ է ներկայացնում: Բաբելոնստանի նախկին ջրանցքները այժմ լցվել են աւազոտ և նրա նոյն իսկ գլխաւոր գետերի՝ Տիգրիսի և Եփրատի ջրերը այնքան է պակասել, որ նրանք անընդունակ են դարձել անգամ համառ նաւարկութեան համար: Երեքնիք բազմամարդ Բաբելոնը այժմ գրեթէ զուրկ է ազգաբնակչութիւնից, եղածն էլ ապրում է վերին աստիճանի աղքատ ու թշուառ դրութեան մէջ: Նրա ներկայ ազգաբնակչութիւնը ամենադժգոյն կոչում է մղում իր գոյութիւնը պահպանելու համար: Դիլիշի կարծիքով սխալ է այն կարծիքը, իբր թէ Բաբելոնի ներկայ անմիջական դրութեան գլխաւոր պատճառը թուրքերն են: Բաբելոնը այն ժամանակն էր աստիճանական քաղաքակրթ, երբ թուրքերը դեռ ևս այնտեղ ոտք չէին դրել: Հնագիտական թիւրքերն, հեղինակի տեսիլով, մի տեսակ կենտրոն է ստեղծել այնտեղ:

Ժամանակակից Բաբելոնում ճանապարհորդելը առհասարակ մեծ դժուարութիւններ է հետ է կապված, նախառաւանդ ճանապարհների հաղորդակցութեան բացակայութեան և այնտեղի վատառողջ կլիմայի շնորհիւ: Հենց այդ կլիմայական աննպաստ պայմանների շնորհիւ Բաղդադում ապրող եւրոպացիների գրեթէ 70% մեռնում է:

Բաբելոնի ներկայ ազգաբնակչութիւնը զգլխաւորապէս բաղկացած է թուրքերից, արաբներից և քրդերից, որոնցից վերջին երկուսը թուրքաց տէրութեան ամենաանասանդ որդիներն են՝ ազատասէր, յափառակիչ և մարդասպան: Սուլթան Աբդուլ Համիդ Բ-ը դրանցից կազմեց Համիդիէ կոչված անկառօն հեծելազորը, բուրդ առաջնորդներով: Դրանով նա գիւղացիների աչքերը բաց արեց: Ներկայումս բոլոր գիւղերը միմեանցից վախենում և սպառնալից են միմեանց վերաբերմամբ: Գրեթէ ամեն արաբ ունի Մարադի հրացան, որով նա սպառնում է իր հարևանի գոյութեան և սեփականութեան: Բաբելոնի ոչ մի տեղ գէպի միւսը վատահոլութիւն չէ ներշնչում, որովհետեւ դրանց մէջ չը կայ և ոչ մի ընդհանուր կապ կամ շահ:

Գերմանական արեւմտագիտական ընկերութիւնը աշխատում է Բաբելոնեան հողի վրա գտնված անտիկ դամբները փրկել գիտութեան համար: Ամենից առաջ նա ուղղում է Բաբելոնի ասպագրաֆիան գտնել, հիմք դնել Բաբելոնի հնախօսութեան և Հին Բաբելոնից մեղ հասած պատմական գնահատել յիշատակաբանների գիտութեան համար ազգանոյնը: Ինչ վերաբերում է Բաբելոնի տեղագրութեան, այժմ ըստ Դիլիշի կարելի է ասել, որ Հերոդոտի հաղորդած տեղեկութիւնները Բաբելոն քաղաքի մասին, չեն համապատասխանում իրականութեան: Այդ պատճառները շատ անգամ գոհվում է հին արեւելեան չափազանցութեան: Դիլիշը պնդում է, որ Բաբելոն քաղաքը իր տարածութեամբ աւելի մեծ տեղ չէր բռնում, քան Գերմանիայի Դրեզդենը կամ Մինխենը քաղաքները:

Բաբելոնում մինչև այժմ կատարված հետազոտութիւնները գիտութեան համար շատ բան են պարզել, որին իր կողմից շատ նպաստել է գերմանական կառավարութիւնը, անգլիական նպատակներ յատկացնելով Բաբելոն ճանապարհով գիտական էկզպեդիցիաներին: Դրան հետ գլուխաւորապէս Գերմանիան առաջ է տանում իր քաղաքական և աստիճանական շահերը Բաբելոնում, աշխատելով այդ երկիրը ապագայում յօգուտ Գերմանիայի դարձնել Եւրոպայի երկրներ:

Վերջին անգամ, երբ Դիլիշը հրատեղեց տրւած Բաղդադի վարկի, վերջինս ասաց նրան. «Այս երկիրը երբեք մի գրախոս էր, իսկ այժմ նա ներկայացնում է մի քաղաք, բայց Բաբելոնը նորից գրախոս էր դառնալ, ինչ Ալլոն, այդպէս է ցանկանում Աստուած: Այդ բանին, Դիլիշի կարծիքով, զգաւակերպէս կը նպաստի Բաղդադի երկաթուղին:

Թիֆլիս
ՆՈՒՐԻՆ ԼՈՒՐԻՆ

Յուլիսի 16-ին Թիֆլիսի Միքայելեան հիւանդանոցում վախճանվեց Մոսկվայի համալսարանի նախկին ուսանող իշխան Մելիքեանը, որ մեղադրվում էր Թիֆլիսի ոստիկանապետ Կովալովի վրա ուղարկած արձակուրդի մէջ: Ինչպէս հաղորդել էինք, ոստիկանապետին ինքուր ծառան գնացել էր ձերբակալված իշխանի խնամքի տակ: Իսկ իշխանը գտնուէր հարաւոր էր հասցրել նրան, որոնցից քիչ մաս, հիւանդն այլ ևս ուշքի չէր գալիս:

Մեղ հաղորդում են, որ տիկին Յուլիանէթ Սարգսեան Նիդադարեանը՝ 1905 թվ. յունիսի-15 վախճանված իր ամուսնու յիշատակին նուիրել է հետեւեալ գումարները. 1) Վեհափառ Հայրիկի ձեռքով էլիմանի ճեմարանի արդատ անկերի օգտին—400 ռ., 2) Նախընտանի կարօտեալ հայերին—300, 3) Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկ.—150 ռ., 4) Թիֆլիսի Հայուհեաց Բարեգ. ընկ.—150 ռ., 5) Ներսիսեան դպրոցի արդատ աշակերտներին օգնող դանձարանին—200 ռ., 6) Գիշերվայ ապաստարանին—100 ռ., 7) Գիշերվայ ապաստանին—100 ռ., 8) Կոյրերի դպրոցին—100 ռ., 9) Հայոց Ժամանակի գրադարանին (Վէրա-մինովսկի փողոց)—50 ռ., 10) Զրի ճաշարանների ընկերութեանը—100 ռ., 11) Համբարի դպրոցին—50 ռ., 12) Գործաշատարանին ընկերութեան գրամարկիին—100 ռ., 13) Թիֆլիսի Թեմակալ առաջնորդի բնակարանի կահ-կարասիքի համար—200 ռ.,—ընդհանուր գումարը 2000 ռուբլի:

Ստացանք հետեւեալ նոր գրքեր. 1) Ապագա, երկրի ժողովածու, հատ. V, թ. 1-րդ, 343 էրես, գիրք 1 ռուբլի: 2) Н.Н. Шваровъ «Шедевродство и промышленность въ Турции». II том, պատկերներ և սկզբներ, պաշտօնական հրատարակութիւն: 3) Ջաւախովի ուսանելի լեզուի գրված հետեւեալ աշխատութիւնը Հին Ջաւախի և Հայաստանի պետական կազմը (Государственный строй древней Грузии и древней Армении) որ հրատարակված է Պետերբուրգում:

Ռուսաց նաւատորմի նաւերից մէկը Երեւանի գիւղի է իր գլխաւոր իշխանութեանը և ինքրիկ որ թոյլ տան էկիպոսին կերակրվելու իրանց ընտրած առեկշիկներին կամ գնող-մատակարարների միջոցով: Էկիպոսի հրամանատարը համաձայնվել է, և վաշտերից մէկը զինուորներն սկսել են կերակրվել: Նրանուրից կերպով: Նաւատորմի յանձնում են գանձարանից այդ նպատակով դուրս արդված գումար և նրանք իրանց ընտրված արտադրիկների ձեռքով, առում է «Новостям» լրագիրը, գնում են իրանց վաշտի համար ուտելիք:

Լրագիրները հաղորդում են, որ առաջինայ սեպտեմբերին Մոսկ քաղաքում կայանալու է միջազգային կոնգրէս համաշխարհային տնտեսութեան հարցերի վերաբերմամբ: Այդ միջազգային համագումարին մասնակցելու համար ուսկառավարութիւնը նշանակել է իր կողմից 3 պատուիրակներ:

Անդրկասպեան երկրում հրատարակվող «Асхабад» լրագիրը հաղորդում է, որ յուլիսի 22-ին 5-րդ լինային բաւարարելու յիշխանուհի կամ գիտաբանների գործընկերները:

հրացան և 45 ատրճանակ: Գողացողները կոտորել են պահեստի դուռը:

Ինչպէս անցեալ անգամ հաղորդել էինք, Պետերբուրգի նաւահանգստի շարժական կայքը վերաբնութեան ենթարկելու, երեացել էր, որ 14 միլիոն ռուբլւց, որ յատկացված էր մարտանաւերի գլխաւոր մասերի շինութեանը, 3,000,000 ռուբլին գողացված էր: Այժմ մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ յուլիսի 8-ին նաւահանգստի բանկոթներէց և պահապաններից մի մի անձ, որ այդ գողութիւնները բաց անելու վերաբերմամբ մեծ ծառայութիւն են արել, ծովային մինիստր Բերկովի անունով գեկուցումներ են ներկայացրել: Որով մեղադրվում են վերջին տարիներս սխառմատեղական գողութիւնով գողացվող մի քանի անձերի գիւմակները: Երկուսի գեկուցումների մէջ էլ ամենից առաջ յիշատակված է գողերից մէկը—գնդապետ Կոյանսի և ապա միւսի՝ նախկին աւագ նաւաշէն Դմիտրիովի և նրա օգնական Սենչուկովի անունները:

«Journal» լրագիր Պետերբուրգի թղթակցի տաւելով, Լոռի քաղաքը օրական ծախսում է 3000 ռուբլի՝ կերակրելու համար այնտեղ բնակեցրած զինուորներին:

Յուլիսի 8-ին Պուտիլովեան գործարանը վերջնականապէս փակվեց: Բոլոր բանուորների հաշիւները վերջացրել պրծել են: 3 օրվայ հաշիւտետութեան ընթացքում բանուորներին վճարել են 160,000 ռուբլի: Դեռ յայտնի չէ, ասում է «Пет. Лест.» լրագիրը, երբ կը վերաբայվի գործարանը:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը, համաձայն դպրոցական շրջաններից մէկի հոգաբարձուի առաջարկութեան, թոյլատրել է, որ Պարկաստանում միջնակարգ դպրոց աւարտած պարսիկ պատանիները մասնն ուսական համալսարանները: Միայն թէ աւարտելուց յետոյ այդ անձերը չեն ունենայ մի քանի արտօնութիւններ, որ տալիս է համալսարանական գիւլով: Նոյնպիսի կարգադրութիւն կայ նաև ոչ ուսումնադատական պարտաներից մի քանիսի վերաբերութեամբ:

Ֆինանսների մինիստրութիւնն ասացել է մի խորհրդ Երեւանի առևտրականներից: Ներքին խորհրդում են, որ բոլոր փոխադրական գործողութիւնները պատկանու փոխառութեան տոկոսը պակասեցվի:

ԴԱՐԱՉԻՉ ԱԳԻՑ մեղ հաղորդում են հետեւեալը. «Երաշխագրում կենան այս տարի շատ ձանձրալի է անցնում, որովհետեւ բացի որոշ հիմնարկութիւնների պաշտօնաններից, ուրիշ ոչ ոք ամառանոց չէ եկել: Երաշխիչ և ընդհանրապէս քաղաքացիները մարկաններ են, իսկ շատաւոր բոլոր գիւղերը հայաբնակ են, այդ պատճառով կենան այս կողմերում խաղաղ է և ապահով:

ԴԱՐԱՉԻՉ ԱԳԻՑ մեղ գրում են. «Եւրոպի 14-ին, երկուցեան ժամը 7-ին Դարաշխի ժամանեց գնեւաւ-նաւահագաւ պրից Լուի Նապոլեօն, իր գաւառի սանձաւում գլխաւորել և միացել էր պրիցի շախմաթի Նոր-Բայադէտի գաւառապետ Ստեփան Լօրդանեանը: գլխաւոր փողոցը, որով անցնելու են պրիցի Նապոլեօնը, գաղաքում էր դռը վանդով: Ժողովուրդը աղու հացով դիմաւորեց յարգելի հիւրին: Այստեղ այժմ գտնվում է մի էկզպեդիցիոն գրադան գրքը:

ԱՄՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ
ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻՍԻՑ

Լաբոյ/Ատանդիանի վրա. Ամբողջ առաջադէմ մարդկութիւնը անալիկալ ճգնաժամի առաջ կանգնել էր դողահար ինչպէս 1870-ի սկ օրերում:

Դամբատայի յօշոտված հայրենիքը կանգնած էր մի նոր փորձութեան հանդէպ՝ բիւմարկեան սիրահարները նոր աղէտներ էր սպասում նրան—մի սպառնալիք, որ իրօք ուղղված էր քաղաքակրթութեան, ամբողջ մարդկային առաջադիմութեան դատին: Ֆրանսիան շախմաթված, տիեզերական աղաւաղութիւն է հան օձախը մարած էլ ուր կը փար: Էլ ի՞նչ կը լինէր Եւրոպան...

Այս անգամ մտքերով էր պաշարված առաջադէմ աշխարհը և ընդհանուր մտանդութեան առարկան Ֆրանսիան էր, բոլոր կողմերից լրվում էին նրա հասցեով համակարներ:

